ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

30-ը հունիսի 2026թ.
Ժամը 11[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Վ. Բարսեղյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա.Համբարձումյան,
ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության տեխնիկական միջոցների, լոգանքի և լվացքի պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Մ. Երամյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանում
1	«ԻԼԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
2	«ԱՍՏՈՅԱՆ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ԱՍՏՈՅԱՆ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է լրացված. բացակայում են՝ հղումը գծագիր-1-ին և արտադրողի տեխնիկական պայմանին, ինչպես նաև բազկակալի մանժետին, փաթեթավորմանը և պարամետրերի թույլատրելի շեղումներին վերաբերվող տեղեկատվությունները: ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 30.06.2026թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 2 մասնակից

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. Գումարը*	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Պոլո շապիկներ /Մայկա-ֆուֆայկա կոմուֆյաժ/	հատ	10000	7380000						
2	Ձեռնոցներ /Ձեռնոց հինգմատնյա կիսաբրդյա/	զույգ	30000	13470000	«ԻԼԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	9900000	11880000	«ԱՍՏՈՅԱՆ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ	10600000	12720000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 03.07.2026թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «ԻԼԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և վերջինիս, անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնահատող Ա. Համբարձումյան

Գնահատող Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան